ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

**Հատուկ ծրագիր բժիշկների, լրագրողների և SS ոլորտի աշխատակիցների համար Երևան քաղաքի Աղոնց փողոցի NN 4 և 4/3 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրների բնակարանների վիճակահանության մասնակցության վճարների մասին**

Հարգելի մասնակից,

Սույնով տեղեկացնում ենք, որ հավակնորդների ցուցակը **bnak.am** կայքում հրապարակվելուց հետո, հատուկ ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Աղոնց փողոցի NN 4 և 4/3 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրների խաղարկվող բնակարանների վիճակահանությանը մասնակցելու իրավունք ձեռք բերած մասնակիցը **10.01.2019-20.01.2019թթ.** <<Միկշին>> ՍՊ ընկերության **2474702376910150** հաշվեհամարին պետք է **փոխանցի 400.000 ՀՀ դրամ, ստանա ծածկանուն և ծածկագիր և bnak.am կայքում կատարի բնակարանների ընտրություն:**

**Բնակարանների ընտրություն**

Բնակարանների ընտրությունը կատարվում է bnak.am կայքում օնլայն տարբերակով, որն իրականացվում է կայքում անձնական սենյակ մուտք գործելու միջոցով: Մուտքի ծածկանունը և ծածկագիրը ստանալու համար ծրագրի մասնակիցը <<Միկշին>> ՍՊ ընկերության գրասենյակ է ներկայացնում կառուցապատողի **2474702376910150** հաշվեհամարին 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի վճարման անդորրագիրը:

Վիճակահանության ժամանակ բնակարան ձեռք բերելու դեպքում վճարված գումարը կհամարվի վճարման ենթակա կանխավճարի մի մաս:

Վիճակահանության ժամանակ բնակարան ձեռք չբերելու դեպքում վճարված գումարն ետ կվերադարձվի մասնակցին:

Վիճակահանության ժամանակ բնակարան ձեռք բերելուց հետո, բայց նախնական պայմանագրի կնքման առաջարկը մերժելու դեպքում վճարված գումարը ետ չի վերադարձվի մասնակցին: